

2013թ հունիսի 1-ին Բաթումի քաղաքի Զ. Պալիաշվիլու անվան երաժշտական ուսումնարա
նում տեղի ո
ւնեցավ
համատեղ
համերգ
երեխաների
պաշտպանության
միջազգային
օրվա
առթիվ
:
Այն
կազմակերպվել
էր
Ավետարանչական
եկեղեցու
և
Հայ
Առաքելական

Ուղղափառ
Սուրբ
եկեղեցու
ջանքերով
:

Համերգին ելույթներով հանդես եկան Ավստրիայից, Գերմանիայից, ՄԵԾ Բրիտանիայից, Հնդկաստանից ժամանած երաժիշտներ, երաժշտական խմբեր, Թբիլիսիի Ավերտարանչական եկեղեցու երգչախումբը, ինչպես նաև Բաթումիի Հայ Առաքելական «Սուրբ Փրկիչ» եկեղեցու «Աղբյուր» մանկական երգչախումբը:

Համերգին ներկա էին Բաթումիի «Սուրբ Փրկիչ» եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Արարատ քահանա Գումբալյանը, Աջարիայի խորհրդարանի պատգամավորներ, Ավետարանչական եկեղեցու հովիվներ, Թբիլիսիից ժամանած հյուրեր: Համերգը լուսաբանվեց տեղի «Աջարիա» հեռուստատեսության եթերով: